



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia
(+374 10) 55-06-02 (Tel./Fax), cs@ysu.am, www.ysu.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°6

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ 29.06.2016 ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻՑ

Օրակարգ

1. Պետական ավարտական քննությունների արդյունքների ամփոփում:
2. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստացիա:
3. Ընթացիկ հարցեր:

1-ին հարցի վերաբերյալ

ԼՍԵՑԻՆ՝ Դեկան Վ. Դումանյանը ելույթի համար ձայնը տվեց ֆ.մ.գ.դ., պրոֆ. Լ. Ասլանյանին: Իր ելույթում նա նշեց, որ Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնում մագիստրոսական թեզերի պաշտպանությունը անցել է պատշաճ մակարդակով: Մագիստրանտների մի մասը (մոտավորապես մեկ երրորդը) գիտական ղեկավարների հետ համատեղ աշխատանքի արդյունքում կարողացել են ներկայացնել պաշտպանության բավական բարձր մակարդակի աշխատանքներ: Մագիստրոսական որոշ թեզեր ապահովել էին միջին մակարդակ, մնացած մագիստրոսական թեզերը բավական լավ որակի աշխատանքներ էին: Լ. Ասլանյանը կոչ արեց ավելի սերտացնել ֆակուլտետի կապերը ԳԱԱ հետ,

մասնավորապես լավագույն ուսանողներին հրավիրելով իրենց ուսումը շարունակել Ակադեմիայի ասպիրանտուրայում:

Իր ելույթում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ, ֆ.մ.գ.դ. Խ. Խաչատրյանը նշեց, որ բակալավրիատի առկա ուսուցման բաժնում քննություններին մասնակցած ուսանողներից 192-ը հանձնել են ամփոփիչ ավարտական քննություններ, իսկ 190-ը պաշտպանել են ավարտական աշխատանք:

Ամփոփիչ ավարտական քննությունների արդյունքներն են՝ 61 “գերազանց”, 39 “լավ”, 88 “բավարար” և 4 “անբավարար”:

Ավարտական աշխատանքների քննությունների արդյունքներն են՝ 86 “գերազանց”, 54 “լավ”, 50 “բավարար”:

Բակալավրիատի հեռակա ուսուցման բաժնում քննություններին մասնակցած ուսանողներից 15-ը հանձնել են ամփոփիչ ավարտական քննություններ, իսկ 14-ը պաշտպանել են ավարտական աշխատանք: Ըստ որում ամփոփիչ ավարտական քննությունների արդյունքներն են 1 “լավ”, 13 “բավարար” և 1 “անբավարար”, իսկ ավարտական աշխատանքների քննությունների արդյունքներն են՝ 3 “լավ”, 11 “բավարար”:

Դիսկրետ մաթեմատիկա և տեսական ինֆորմատիկա մագիստրոսական ծրագրով թեզերի պաշտպանությանը մասնակցել են 12 ուսանող՝ 12 “գերազանց” արդյունքներով:

Թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման մագիստրոսական ծրագրով թեզերի պաշտպանությանը մասնակցել են 6 ուսանող՝ բոլոր 6-ն էլ ստանալով “գերազանց” գնահատական:

Հաշվողական մեքենաների, համալիրների և ցանցերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում մագիստրոսական ծրագրով թեզերի պաշտպանությանը 11 ուսանողներից մասնակցել են 10-ը՝ 8 “գերազանց”, 2 “լավ” արդյունքներով, 1-ը չի ներկայացել:

Քննությունների արդյունքում շրջանավարտների գիտելիքների վերաբերյալ ընդհանուր տպավորությունը դրական է, բոլորը տիրապետում են բակալավրի կոչմանն արժանանալու համար անհրաժեշտ գիտելիքների՝ բացառությամբ հատուկենտ դեպքերի, ինչն արտահայտվել է անբավարար գնահատականների առկայությամբ:

Առավել հաճելի է նշել այն շրջանավարտների մասին, ովքեր քննություններին իրենց փայլուն պատասխանով և ավարտական աշխատանքների որակով գերազանց տպավորություն թողեցին: Հուսանք, որ նրանց աշխատանքը շարունակական կլինի մագիստրատուրայում և հետագա տարիներին:

Ցավոք, կային նաև համալսարանի շրջանավարտին ոչ հարիր պատասխաններ: Հատկապես դա վերաբերում է հեռակա ուսուցման բաժնի որոշ շրջանավարտների, ովքեր ներկաներիս ծանր խոհաճությունների առիթ տվեցին, ընդ որում, նրանց մեջ կային այնպիսիք, ովքեր աչքի էին ընկնում ոչ միայն մասնագիտական գիտելիքների ցածր մակարդակով, երբեմն նաև դրանց իսպառ բացակայությամբ, այլև իրենց վարքով թողեցին նույնիսկ իրենց՝ ԵՊՀ-ի շրջանավարտ լինելու վերաբերյալ բացարձակ անպատասխանատու և անտեղյակ անձանց տպավորություն:

Ներկայացված ավարտական աշխատանքները, որպես կանոն, պարունակում էին համակարգչային հաշվարկներ և ծրագրավորման փաթեթներ:

Խ. Խաչատրյանը նշեց նաև, որ ավարտական աշխատանքների որոշ ղեկավարներ, մեծ ջանքեր գործադրելով հանդերձ իրենց վստահված շրջանավարտների թեմաների իրականացման ուղղությամբ, ձևականորեն են մոտեցել այդ աշխատանքների պաշտպանության և գնահատման գործընթացին՝ հաճախ ներկա չլինելով իր սանի պաշտպանությանը և

երբեմն ակնհայտորեն բարձր գնահատելով նրա աշխատանքը և դրանով իսկ անհարմար վիճակի մեջ դնելով քննող հանձնաժողովի անդամներին:

Այնուհանդերձ ընդհանուր տպավորությունը դրական է: Դա հաստատում է այն փաստը, որ և՛ ավարտական քննություններում և՛ ավարտական քննություններում “գերազանց” գնահատվածների թիվն էականորեն գերազանցում է “անբավարար” գնահատվածների թվին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Պետական ավարտական քննությունների արդյունքները գնահատել բավարար:

2-րդ հարցի վերաբերյալ

Լսեցին՝ - «Ծրագրավորում և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ » ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Մինաս Հովհաննիսյանի ատեստավորման հարցը (ղեկավար Ս. Նիզիյան):

Որոշեցին՝ Մինաս Հովհաննիսյանի կատարած աշխատանքը գնահատել դրական և երաշխավորել ատեստավորումը 2015-16 ուսումնական տարում:

Լսեցին՝ - «Ծրագրավորում և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ » ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Ռուբեն Աղաջանյանի ատեստավորման հարցը (ղեկավար Ս. Նիզիյան):

Որոշեցին՝ Ռուբեն Աղաջանյանի կատարած աշխատանքը գնահատել դրական և երաշխավորել ատեստավորումը 2015-16 ուսումնական տարում:

Լսեցին՝ - «Թվային անալիզ և մաթեմատիկական մոդելավորում » ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Ռազմիկ Մկրտչյանի ատեստավորման հարցը:

Որոշեցին՝ Ռազմիկ Մկրտչյանի կատարած աշխատանքը գնահատել դրական և երաշխավորել ատեստավորումը 2015-16 ուսումնական տարում:

Լսեցին՝ - «Դիսկրետ մաթեմատիկա և տեսական ինֆորմատիկա» ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Հրանտ Խաչատրյանի ատեստավորման հարցը (ղեկավար Ռ. Քամալյան):

Որոշեցին՝ Հրանտ Խաչատրյանի կատարած աշխատանքը գնահատել դրական և երաշխավորել ատեստավորումը 2015-16 ուսումնական տարում:

Լսեցին՝ - «Դիսկրետ մաթեմատիկա և տեսական ինֆորմատիկա» ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Արման Ճիտոյանի ատեստավորման հարցը (ղեկավար Ա. Չուբարյան):

Որոշեցին՝ Արման Ճիտոյանի կատարած աշխատանքը գնահատել դրական և երաշխավորել ատեստավորումը 2015-16 ուսումնական տարում:

Լսեցին՝ - «Դիսկրետ մաթեմատիկա և տեսական ինֆորմատիկա» ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Աշոտ Մինասյանի ատեստավորման հարցը (ղեկավար Ա. Ալեքսանյան):

Որոշեցին՝ Աշոտ Մինասյանի կատարած աշխատանքը գնահատել դրական և երաշխավորել ատեստավորումը 2015-16 ուսումնական տարում:

3-րդ հարցի վերաբերյալ

ԼՍԵՑԻՆ՝ «Դիսկրետ մաթեմատիկա և տեսական ինֆորմատիկա» ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.դ. Վահագն Համլետի Սիքայեյանին պրոֆեսորի կոչում շնորհելու հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Երաշխավորել Վահագն Համլետի Սիքայեյանին՝ շնորհելու պրոֆեսորի գիտական կոչում:

ԼՍԵՑԻՆ՝ Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի աշխատակիցներ Ա. Հ. Առաքելյանի, Շ. Ա. Բաղդասարյանի, Կ. Գ. Գալստյանի, Վ. Ա. Զաքարյանի, Գ. Ա. Մարտիրոսյանի, Զ. Ա. Նազարյանի, Գ. Ռ. Սարգսյանի «ԻՆԹԵԼ x86 ԱՍԵՄԲԼԵՐ (իրական ռեժիմ)» ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Երաշխավորել տպագրության Ա. Հ. Առաքելյանի, Շ. Ա. Բաղդասարյանի, Կ. Գ. Գալստյանի, Վ. Ա. Զաքարյանի, Գ. Ա. Մարտիրոսյանի, Զ. Ա. Նազարյանի, Գ. Ռ. Սարգսյանի «ԻՆԹԵԼ x86 ԱՍԵՄԲԼԵՐ (իրական ռեժիմ)» ուսումնամեթոդական ձեռնարկը:

ԼՍԵՑԻՆ՝ Թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ. Ռ. Խաչատրյանի դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել Ռ. Խաչատրյանի դոկտորական ատենախոսության թեման՝ «Վրանների մեթոդը բազմարժեք արտապատկերումների տեսությունում և օպտիմիզացիայի ոչ ողորկ խնդիրներում »:

ԼՍԵՑԻՆ՝ Ա.01.07 «Հաշվողական մաթեմատիկա» մասնագիտությամբ հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Սիրանուշ Հրաչյայի Ավետիսյանի ատենախոսության թեմայի անվանման և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել Սիրանուշ Հրաչյայի Ավետիսյանի ատենախոսության թեմայի անվանումը «Սպլայնների կիրառումը թվային ինտեգրման խնդրում»:
Գիտական ղեկավար նշանակել ֆ.մ.գ.դ., պրոֆ. Յու. Հակոբյանին:

Գիտական խորհրդի նախագահ

Վ. Դումանյան

Գիտական խորհրդի քարտուղար

Է. Դանոյան